

ԱՊԱՐԱՆԻ ԲԱՆԱՀԻՒՄՈՒԹԻՒՆԻՑ

Ե. ՀԱՎԱՅԵԱՆԻ

ԱԽՉԻ ՄԱՆՈՒԿԻ^{*)}

Մէ թագաւոր կընի, էտոր ունի մէկ տղայ, հինգ տարեկան տղայ, էտ քաղաքի մէջ էլ մէկ հատ պառաւ կընի. էտ պառաւը կերթայ թագաւորէն փող գուզէ, թագաւոր էտոր փող չի տայ, էտ էլ գըյնի թագաւորի խետ ներհակ, կասայ էնպէս մէ բան բերեմ գիլուն, օր շիվարի թագաւորը, կերթայ մէ օր թագաւոր տղան կը գողնայ, կը տանի կը բցայ մէշէն, օր ջանաւարնեռը ուտեն, Մէ գէլ կուզայ կը վերցու կը տանայ էտ տղէն օր ուտայ, Մէ աւչի Մանուկ կընի, էտի կը տենայ օր գէլ պիտի էտ տղին ուտայ, թամնքն կը քաշայ կը զանայ գիլուն կսպանայ, տղէն կը վերցու կը բերէ իրա տուն էստուն թագաւոր կտենայ օր իրեն տղէն չկայ, գըյնի շուռ գալուն. կիգան էտ աւչի Մանուկի գեղը, հարցմոնք կանայ թէ էսպէս տղայ է ինծի կորէ, որն որ ինձ տուեց, պարգն կիտամ էնտուր. Աւչի Մանուկ լսեց թէ էսի թագաւորի տղայ ա, ասաւ տանիմ տամ իրան. Տարաւ տուեց իրան, թագաւոր շամ ուրիսցաւ, էսաց. «Գնա, առաւօտ արի, քո պարգն տամ»: Թագաւորը գիշերւայ մէջ առաւ ուր տղան, ետ դարձաւ, էկաւ իրան տուն Առաւօտուն աւչի Մանուկ էկաւ տեսաւ օր թագաւորը բոչեր ա, մէկ հատ քոլոզ կար, մէկ հատ կտուռուկ Փիտիկ, մէկ բուլուզ (սրինդ): Աւչի Մանուկ վերցուց, էսաց. «Էս քոլոզ կը տանիմ, կը դնամ գլոխը, թէ ուանջպար եղայ, էս քիսիկ էլ կը տանիմ, կը կարեմ եախիցս, էս բուլուզ էլ կը տանիմ կը փչեմ թէ չոպան եղայ»: Ետոյ շուշի կտորանը

*). Պատմեց Ապարանի Ղարաբիլիսա գիւղում նոյն գիւղացի Սարօ Արեշատեան յիսնամենայ, անգրագէտ ծերունին 1909 թ. նոյեմբերի 11-ին. Սրա հայրը գաղթել է այսաեղ Ալաշկերտի Քորու մուտուշ գիւղից: Սարօն այժմ պարապում է երկրագործութեամբ և ձմեռները օդաներում հերիաթ է ասում:

կար, վերցուց թակեց իրա քիսիկ, էսաց. «Էս ա տանեմ էնեմ աղաթաշ»: Վերցուց էտ իրեքը էկաւ իրա տուն: Մէրն հարցուց. թէ թագաւորն ինչ պարզե տուեց քեզի:

էսաց. «Էս քիսիկն կար էնտեղ, էս քոլոզն, մէ հատ էլ բըլուլ»:

Մէրն էսաց. «Հան տեհամ ինչպէս քիսիկ ա»:

Աւչի Մանուկ հանսեց ծոցից քիսիկ տուեց մօրն, հըպջ, առ, ըսեց, շուշի կառըտանք կայ մէջը, մեզի կենենք աղաթաս:

Մէրն առաւ, բերան բացեց քիսիկ, տեսաւ օր ըմէն անգին բար էր, մէրն էսաց. «Տես, օրթի, թագաւորը սուտ ասած չէ, հըմէն անդին քար ա»:

Աւչի Մանուկ շատ ուրիխացաւ, մէր շատ ուրիխացաւ, ըսաց. «Բէ տեհնանք քոլզի հունարն ինչ ա»:

Աւչի Մանուկը առաւ գրեց իրա գլոխն, մօրն աչքին չերեւաց էր:

Մէրն էսաց. «Աւչի Մանուկ, դմբն ես, իմ աչքին չես երևայ»:

Աւչի Մանուկն էսաց. «Ըստեղ եմ, առաջդ կայնուկ, չես տեհնայ, էսի բանց քիսիկն լաւ ա, դիւշմի հախէն կը գամճ»:

Մէրն ըսաց. «Բըլուլը բե տեհնանք էնտոր հունարն ինչ ա»:

Աւչի Մանուկ բըլուլը բերեց, գրեց բերնին փչեց, քառառն արար, թոփուզներ ձեռն ձէն տուին, ասին. «Աւչի Մանուկ, աշխարհք քանդենք», թէ շիկենք»: Աւչի Մանուկ ըսաց. «Ոչ քանդէք, ոչ շինէք, էնպէս հանդարտ մացէք»: Քառսուն արարը աներևոյթք էղան:

Աւչի Մանուկ ըսաց. «Էսի ամենուց լաւ ա»:

Ետոյ մէրն առաց. «Մանուկ ջան, էս անդին քարուց մէկը տանենք խուրդենք»: Պառաւը վերուց քարը տարաւ քաղաք խուրդելու: Տարաւ զառափի մօտը: Զառաւն իշկեց, տեսաւ, ըսաց. «Պառաւ, ես ըստուր գին չեմ կանայ տայ, գնա մէ ծանդը սառափ կայ, էնտոր մօտը»:

Պառաւը վերցուց քարը գնաց ծանդը սառափի մօտ: Ֆնաց, ըսաց. «Առ իտա քար խուրդա»:

Սառափն առաւ քարն իշկեց, ըսաց. «Էտոր գին չըմ կընաւայ»:

Պառաւն ըսաց. «Ինչ կընաս տուր»:

Սառափը բերեց ինչ օր կար չկար տուեց, մէ բան էլ մընաց պակաս:

Պառաւ վերցուց փող առաւ էկաւ տուն, իրենց հըմար շինութեն շինեցին, տան մէջ, ինչ կայ չկայ դրստեցին: Աւչի Մա-

նուկ եռուուն ձի առաւ, էղաւ բազրկան, ճոթ բարձաւ, տարաւ ուրիշ քաղքներ ծախելու Գնաց մէ թագաւորի քաղաք դուս էկաւ, մէ շնութեն առաւ, ուր ապրանք լցեց մէջն. Բերեց մէկ խոնչա պատրաստեց թագաւորի համար, օր տաներ տիսութեն. իրեք հատ անգին քար գրեց մէջը, տարաւ թագաւորին, էրկու խոնչա էլ ուրիշ: Բազրկան է բերէ: Թագաւորը վազիրին ըսաց. «Ել էս խոնչէքը բաց տես»:

Վազիրը յելաւ խոնչէքը բացեց, տեսաւ, էրկու բազրկանին, ճամփու դրեց, գնաց. Աւչի Մանուկի խոնչան պախեց, բերեց տուաւ թագաւորին, ըսաց. «Բաց տես էս խոնչան»:

Թագաւորը բացեց տեսաւ օր իրեք հատ անգին քար կայ մէջը, ըսաց. «Վազիր, էս խոնչի դէմը Բնչ տանք էս բազրկանին, օր էրթայ ուր ծախսն էնսայ»:

Վազիրն ըսաց. «Պո թագաւորութեն էսի չի հանէ, իսանին (մարդուն) զին չունի, արի քո ախչիկ տու ըդրան»:

Թագաւորը լսեց վազիրի խօսքն, ըսաց. «Ախչիկս տուի քեզի, գնա քու առուծախսն էրա»:

Տղան յելաւ էկաւ իրա առուծախսն էնելու Ախչիկը լսեց, օր թագաւորը իրան տուեր ա մէ բազրկանի, դարձաւ մօրն ըսաւ. «Էն տղէն բերէք ես տեսնիմ»:

Մէր գնաց թագաւորին ըսաց, թէ ախչիկը տղին կուզայ տեսնի: Թագաւորը մարդ զրկեց տղին, թէ իգայ ուր նշանած տեսնի: Ետու տղէն շատ ուրիտացաւ, բերեց մէ խոնչա պատրաստեց, իրեք հատ անգին քար դրեց մէջ, իրկուն գնաց թագաւորի ախչիկայ մօս: Թագաւորի ախչիկ տեսաւ օր նշանածն էկաւ, իշկեց, դուր չեկաւ, ըսաց. «Արի նսաի ըստեղ»: Տղէն խոնչէն դրեց թագաւորի ախչիկայ յառէջ նստաւ. Թագաւորի ախչիկ խոնչէն բացեց, տեսաւ իրեք հատ անգին քար կար մէջը, դարձաւ տղին հարցուց, թէ տղայ, էս քարեր յմւատ ա: Տղէն քիսէն հանեց ծոցից, ըսաց. «Ինչ զտար խամ քար կայ, բեր շինեմ անգին քար»: Թագաւորի ախչիկն ըսեց ուր ջառիկներուն (աղախին). «Էնատե շուշի կտորտանք կայ, բերէք տեսնանք իմալ կենէք անգին քար»:

Զառէք շուշի կտորտանք բերին տուին տղին, լցեց իրա քիսիկն, էղաւ ըմէն անգին քար: Թագաւորի ախչիկն ուրին դըրեց քաղցրութեն, ձեռք ըցեց տղի վզով, ըսաց. «Ախչիկներ, հաց բերէք, ուտենք, իմ նշանած էկեր ա: Բերին հաց դրին թագաւորի ախչիկն ըսաց. «Ախչիկներ, ամէնքը մէ մէ թաս տայ իմ նշանածին խմայ»:

Էտ ջառէք մէ մէ թաս տուին էտ տղին, խմեց, եմեց, տղէն

քեֆոֆցաւ, յետոյ թագաւորի ախչիկն ըսեց. «Են քիսիկն տամ ինձի»:

Տղէն քէֆն հասաւ, քիսիկը հանեց տուեց թագաւորի ախչիկն, թագաւորի ախչիկը քիսիկը պահեց, ձէն տուեց իրա ջառէքներուն, ըսեց. «Ճիշէր էս տղին թալէր դուս»: Զառէր տղին տփեցին, հանեցին դուս, տարան բալքի դրադ թալեցին էկան. Տղէն էտեղ մաց չուս լուս բացուաւ. լուս բացուաւ, տղի ուշըն էկաւ վրէն, տեսաւ օր ուր գլոխ ջարդած էր, ուր շորեր ըմէն ճղրաւէկ էր, ըսաց. «Ել էրթած դուքան թնչ էնեմ, ըսեց, էրթած իմ տուն»: Էլաւ էկաւ, էկաւ, իր տուն, էկաւ, մէր տեսաւ, ըսեց. «Աւ չի Մանուկ, էտ ի՞նչ ա քո հալ»:

Տղէն ըսաց. «Գացի էղայ թագաւորի փեսայ, թագաւորի ախչիկ էս օյին հանեց զլոխս, իմ քիսիկ ծոցիցս առաւ, հիմիկ էկեր եմ, օր քոլոզը տանհմ, բալքի իմ քիսիկ բերեմ»:

—Մէրն հարա չես կարայ բերե, ասաց, քո մօտէն քոլոզն էլ կառնի:

«Չէ, ըսեց, էտ խետ չեմ խարուի»:

Էլ մէրն ձէն չերեց, առաւ քոլոզը, զնաց տղէն: Դնաց էն թագաւորի բաղաքը, զնաց ուր դուքան բացեց նստաւ, կէս աւուր մօա քոլոզը դրեց զլոխը զնաց նշանածի մօտը: Քոլոզը զլոխն էր, նշանածը չտեսաւ. ուրին (յւրեան) նշանածը թէ հաց բերէք ուտեմ, ըսեց: Զառէր հաց բերին դրին: Թագաւորի ախչիկ նստաւ ուտելու: Ախչիկը չուր մէ գդալ կերաւ, աւչի Մանուկ նստաւ կողքը հըմմէն կերաւ: Թագաւորի ախչիկը տեսաւ օր տալերքը դարդկւաւ, ինքը հըլը մէ բրդուճ է կերէ, ձէն տուեց, թէ իմալ հաց կը բերէք, կիրակուր շատ բերէք: Զառէր նորէն կերակուր բերին: Թագաւորի ախչիկ աեսաւ օր մէ բրդուճ կերաւ, էլման տալերք դարդկւաւ, ախչիկն յիմցաւ օր էսի իրա նշանածի բանն է, ձէն տուեց, ըսեց. «Աւչի Մանուկ, ես քեզի փորձեցի, աչքիս էրևա, տեսնեմ ինչ կըսես»: Աւչի Մանուկ ուր քոլոզ ուր գլխէն իջուց, էրևաց թագաւորի ախչիայ աչքին: Թագաւորի ախչիկ ուրին դրեց դոստութեն, ձեռք ցկեց տղի վզով, ըսաց. «Ես քեզի փորձեցի, տեսնիմ հունար հւնիս»:

Տղէն ըսաց, թէ հունար ունիմ, բա չունիմ, իմ քիսիկ իմ մօտից ինչի՞ առար:

Թագաւորի ախչիկ ըսաց. «Ես չեմ առէ, էս ա քու քիսիկ, քո բան պէտք ա ես պախեմ: Դու էն ըսա, էն ի՞նչպէս դու աներևոյթք դարձար, իմ աչքին չըր էրեի»:

Աւչի Մանուկ ըսաց. «Էս քոլզի հունարն էր, օր էս քոլոզ դնեմ զլոխս, էլ մարդու աչքին չեմ երևայ»:

Ախչիկն ըսեց. «Տու հըլը տենամ»:

Աւչի Մանուկը խաթրէն չելաւ, տուեց քոլողը. Ախչիկը առաւ, ձէն տուեց ջառէցներուն, ասեց, «Ես ձեզի կըսեմ տարէք էս տղին ըսպանէք, մի թողէք սաղ մնայա: Ջառէքը վերցին տղին ջարդելով տարան Տարան քաղքէն դրադ մէ խանգակի մէջ թալեցին էկան: Սապախտան արևն էղաւ կէս օր, տղան նոր օյախցաւ (ուշըի եկաւ): Օյաղցաւ, ինքն իրեն միտք էրաւ ըսաց. «Ես դուքան էրթամ լինչ էնեմ, արի էրթամ տուն, բըլուլը բերեմ, կէղնի օր էսի մէկ բան էնայ»: Տղէն էկաւ, գնաց իրա տուն: Մէր տեսաւ, օր տղի գլուխ ջարդուկ ա, տղի շորեր ճղոտուկ ա, ձէն տուեց, ըսեց. «Մանուկ, էտ քու հայ լինչ ա»: Տղէն ըսեց թէ թագաւորի ախչիկը էսպէս օյին հանեց իմ գլոխ, իմ քոլողն իմ մօտիցս առաւ, լսեց. «Մէր, ըսեց, էկեր եմ, օր բըլուլ տանեմ, բալքի իմ քիսիկն ու քոլող բերեմ»:

—Մէր բա, ըսեց՝ «Րդի ջան, բըլուլն էլ մօտէդ կառնի, մի տանէք»:

«Զէ, ըսեց, ըստուր չեմ խափուի»: առաւ բըլուլ գնաց: Տըզէն առաւ բըլուր էկաւ, քաղքի դրադ նստաւ, բըլուլ փչեց: Փըչեց, քառսուն արար թոփուղներ ձեռ կայնան կայնան ըսին. «Բանգենք աշխարհք, թէ լինկենք»:

Աւչի Մանուկ ըսաց. «Թաղքի մէ դրադ քանդելով արէք»: Արարներ աներ քանդելով գնացին. թագաւորի ախչիկ տեսաւ, օր քաղաք քանդեցին, ըսեց ջառերուն. «Թացէք էն տղին բերէք, էսի ընտոր գործ կըլնիս: Ջառէքը գնացին գտան, ըսին. «Թագաւորի ախչիկ քեզի կը դանչայ»: Աւչի Մանուկ բըլուլը խանեց բերնից, արարները հանդարատան, ինքը ընկաւ ջառէքի ետև, էկաւ թագաւորի ախչիկայ մօտը: Թագաւորի ախչիկը էլաւ կայնաւ, գնաց մօտը, ձեռքը բռնեց, ըսեց. «Արի, էտ լինչ բան ա կենես դու, թագաւորը լսեց (որ լսէ) իմ գլոխ կը զանայ. ես քեզի կուզի փորձեմ, տենամ հունար ունիս»: Աւչի Մանուկ ձէն տուեց, ըսեց. «Իմ քիսիկ, իմ քոլող տու, գամ ներս»: Ախչիկ վերցուց թէ մըրի տամ: Մանուկը գնաց, ախչիկը ձեռ ձգեց Մանուկի զողվ, Մանուկի երես պագեց, ըսեց. «Ետ լինչ կենես, դու գուզես ինծի տաս ըսպանթլ»: Ետոյ ըսեց. «Ետ ինչմիզ էր էս քաղաքը դու էտպէս աւերեցիր»: Աւչի Մանուկն հանեց բըլուլը, ըսեց. «Էս բըլուլովն էր»:

—Էտոր հունարն լինչ է, ըսեց ախչիկն:

—Լսեց. Օր գնեմ բերնիս փչեմ, հունարը կը տենաս:

—Լսեց. Հըլը դի տենամ:

Դըրեց բերանը փըչեց, քառսուն արար թոփուղներ ձեռը

կայնած, ըսին. «Աւչի Մանուկ, աշխարհք քանդենք, թէ շիկենք»:
Թագաւորի ախչիկ ձեն տուեց. «Եսաման, ես կը վախեմ,
էղ թնչ բան աց:

Աւչի Մանուկ բերնից հանեց, արարները կորան, Թագաւոր
ը ախչիկն ըսաց. «Հըլը տու ես էլ փչեմ, տենամ իմ փչելուն էլ
կիզմն»:

Աւչի Մանուկ խաթրէն չելաւ, տուեց. Թագաւորի ախչիկը
փչեց, քառոսւն արար թոփիուղները ձեռքը կայնան, ըսին. «Թա-
գաւորի ախչիկ, աշխարհք քանդենք, թէ շիկենք», Թագաւորի
ախչիկ ըսեց. «Ոչ քանդեք, ոչ շիկեք, էս տղին տարէք Աև ծովու
ու Սիպատակ ծովու արան դրէք», Վերցին տղին տարան դրին
երկու ծովու արան ու էկան:

Տղէն մեաց էտ ծովու արան, Սապախտան զարթաւ, տեսաւ
օր չորս բոլորը ջուր ա, մնաց մոլորած, իրեք օր ոչ կերաւ, ոչ
խմեց, ետոյ մէ քիչ առաջ գնաց՝ երկան խնձոր գտաւ, վերուց
կերաւ, անկւաւ զլիսու վրայ, իրեք օր էլ էտմալ տնկուկ մնաց։
Ետոյ գնաց կլոր ինձոր գտաւ, ըսաց. «Իմ ջանիս հասէ, էտ էլ
պտի ուտեմ»։ Վերցուց կերաւ՝ ազատուաւ, էլաւ կայնաւ Աստ-
ծուն ազաղակեց, դանչեց Աստուած օր իրան էս նեղ տեղէն ա-
զատայ։ Աստուած ձեն լսեց, հրեղէն ձին ծովուց դուս էկաւ, ը-
սեց. «Մանուկ, էն խնձորներէն վերցու, ըսեց, ետո արի իմ քա-
մակը՝ եսքեզի կընցում ծովն էնթին»։ Աւչի Մանուկ գնաց էրկու
եայլուղ խնձոր ժողուեց, էկաւ հրեղէն ձին հեծաւ։ Հրեղէն ձին
ծովն ընցաւ։ Ծովն ընցաւ, տղին դրեց գետին, լեզու էլաւ, ը-
սեց. «Ետ էրկէն խնձորներէն կը տանիս կը ժախես քու նշանա-
ծի վրայ»։

Առաւ խնձորներն էկաւ Մանուկը իրա նշանածի պալատի
տակը, ձեն տուեց. «Լաւ խնձր»։ Թագաւորի ախչիկը լսեց, ջառին
ըսեց. «Գնա մէ քիչ առ բէ»։ Զառէն գնաց առաւ էկաւ։ Թագաւորի
ախչիկը կերաւ թէ չէ անկւաւ զլիսու վրայ։ Զառէք թափան թա-
գաւորի ախչկայ բոլորը, քաշեցին ոտքերիցը օր պարզն, չպար-
զւաւ, էլի զլիսու վրայ անկուած մնաց, Զառէքը ընրէէ բարձերը
բերին դրին զլիսի տակը։ Ախչիկը ըսեց. «Զանմ, էսի էլի էն տղի
բաներն ա, գացէք տղէն բերէք»։ Զառէք գացին տղի մօտը, գա-
ցին ըսին. «Թագաւորի ախչիկ զլիսի վրայ անկվէ, արի ազատամ»։
Տղէն ըսեց. «Գացէք իմ քիսիկ, իմ քոլոզ, իմ բըլուլ բերէք, նոր
գամ ազատամ»։ Զառէն զարձաւ գնաց թագաւորի ախչկան ըսեց.
«Տղէն ուր քիսիկ, քոլոզ, բըլուլ կուղայ, օր գայ ազատայ»։

Ախչիկը ըսեց. «Հէնա դոլարն ա, տարէք տուէք, թող գայ
ընծի ազատայ»։ Զառէն վերցուց քիսիկ, քոլոզ, բըլուլ, տարաւ

տուեց տղին: Տղէն ըսեց. «Դացէք, էսօր չեմ կանայ գայ, առաւօտ
կիզամ ազատեմ, թող մնայ էնպէս անկուկ», Մնաց առաւօտ, նոր
տղէն գնաց, առաւ էն կլոր խնձոր մտաւ ախչկայ մօտ, ջառէքին
էրեց դուս, զիշեր մնաց մօտ, խնձոր տուեց ախչկան, կերաւ ա-
ռաւօտ շիտկաւ ըսեց. «Դնա քո առուծախս վերջացու, էնինք է-
թանք քո երկիր», Տղան էլաւ գնաց ուր առուծախս վերջացուց,
առաւ ախչիկ գնաց ուր տուն, օխտն օր, օխտը զիշեր հարսնիք
էրեցին: Էն հասաւ ուր մռւրապին, դուն էլ հասնիս քու մու-
բազին,